



ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 3,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

3 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77-07-24-87

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ

2012-2013 թթ. ուս. տարվա ընթացքում կատարած աշխատանքներ

2012-2013 ուս. տարվա ընթացքում Ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող գործառույթներ ու քայլեր, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

Ստորև ներկայացված է կատարած աշխատանքների ցանկը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ՝ հետևյալ թեմաներով՝

1. «Խորհրդավոր ընթրիքը» (Կ/Ա ֆակուլտետ, 20.09.2012թ.),
2. «Տպիչներ» (Բ/Գ ֆակուլտետ, 29.10.2012թ.),
3. «Բջջային հեռախոսի լավ ու վատ հատկությունները» (Բ/Գ ֆակուլտետ),
4. «Օ~, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր» (Հ/Գ ֆակուլտետ, 07.11.2012թ.),
5. «Խոսքի կուլտուրա» և «Վարվելակերպ» (Տնտ. ֆակուլտետ, 12.11.2012թ.),
6. «Բերմուղյան եռանկյունի» (Բ/Գ ֆակուլտետ, 15.11.2012թ.),
7. «Աղքատության հաղթահարման ուղիները» (Տնտ. ֆակուլտետ, 22.11.2012թ.),
8. «Կիլիկյան հայկական իշխանությունները» և «Կիլիկիայի հայկական թագավորությունը» (Հ/Գ ֆակուլտետ, 28.11.2012թ.),
9. Չեկուցումներ շարք ԱՄՆ 10 ազգային տոների վերաբերյալ (Հ/Գ ֆակուլտետ, 29.11.2012թ.),
10. «Ալբերտ Այնշտայն» (Բ/Գ ֆակուլտետ, 01.12.2012թ.),
11. «Պարույր Սևակի սիրտը» (Հ/Գ ֆակուլտետ, 05.12.2012թ.):
12. «Քուն և երազներ» (Տնտ. ֆակուլտետ, 08.12.2012թ.),
13. «Ազրեսիվ վարք հասկացության ընդհանուր մեկնաբանությունը» (Տնտ. ֆակուլտետ, 08.12.2012թ.),
14. «Աշխարհի վերջը» (Բ/Գ ֆակուլտետ, 10.12.2012թ.),

15. «Էքստրեմալ տուրիզմի էությունը» (Տնտ. ֆակուլտետ, 12.12.2012թ.),
16. «Երագներ» (Հ/Գ ֆակուլտետ, 13.12.2012թ.),
17. «Սպիտակի երկրաշարժը» (Հ/Գ ֆակուլտետ, 13.12.2012թ.),
18. «Աշխարհի յուրահատուկ հյուրանոցները» և «Աշխարհի տեսարժան վայրերը» (Տնտ. ֆակուլտետ, 17.12.2012թ.),
19. «Սուրճի հասկությունները» (Բ/Գ ֆակուլտետ, 18.12.2012թ.),
20. «Դա Վինչիի կողերը» (Բ/Գ ֆակուլտետ, 06.03.2013 թ.),
21. «Վլիմայի փոփոխություն: Գլոբալ տաքացում» (Բ/Գ ֆակուլտետ, 21.03.2013 թ.):

Կինոդիտումներ`

1. “Тело в любви”: Գիտական-գեղարվեստական ֆիլմը պատմում է, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում մարդու օրգանիզմում, երբ նա սիրահարված է: (04.10.2012թ.),
2. “Ma femme s'appelle Maurice” գեղարվեստական ֆիլմ` ֆրանսերեն (Հ/Գ ֆակուլտետ, 08.11.2012թ.),
3. “Юрий Гагарин - звездный избранник” փաստավավերագրական ֆիլմ (Բ/Գ ֆակուլտետ, 08.04.2013 թ.),
4. «Վամուրջ»` 2003 թ. չեխական արտադրության գեղարվեստական ֆիլմ: (10.04.2013 թ.),
5. «Վանա ծովուն արշալույսը» (Բ/Գ ֆակուլտետ, 12.04.2013 թ.),
6. «Մայրիկ»` գեղարվեստական ֆիլմը: (23.04.2013 թ.):

Գիտաժողովներ`

1. Ներմասնաճյուղային գիտաժողով` նվիրված մասնաճյուղի ՈԻԳԸ հիմնադրման 10-ամյակին: Գիտաժողովը տևեց 4 օր` յուրաքանչյուր օր տարբեր ֆակուլտետներում: Ընդհանուր առմամբ եղան 30 զեկուցումներ: (04.12.2012-07.12.2012թթ.),
2. Բնական գիտությունների ֆակուլտետում` «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության գծով: Ներկայացվեց 4 զեկուցում: (02.05.2013 թ.),
3. Տնտեսագիտության ֆակուլտետում` «Զարգացող երկներին բնորոշ տնտեսական խնդիրները» խորագրով: Ներկայացվեց 7 զեկուցում: (02.05.2013 թ.),
4. Բնական գիտությունների ֆակուլտետում` «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության գծով: Ներկայացվեց 4 զեկուցում: (03.05.2013 թ.),

5. Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ «Մանկավարժություն և հոգեբանություն» և «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունների գծով: Կարդացվեց 7 զեկուցում: (10.05.2013 թ.):

Ինտելեկտուալ խաղեր՝

1. Անհատական ինտելեկտուալ խաղ: Հայտագրված 36 մասնակիցները բաժանվեցին երկու խմբի: Յուրաքանչյուր խմբից հաջորդ փուլ անցան առավելագույն միավորներ հավաքած 5 մասնակիցները: Եզրափակիչ խաղում առաջին 3 տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվեցին պատվոգրերով և գրքերով: (01.10.2012-10.10.2012 թթ.),
2. Ինտելեկտուալ խաղ “Facebook” սոցիալական ցանցում: Խաղին մասնակցեցին ավելի քան 40 օգտատերեր: (25.01 - 10.03.2013 թ.),
3. Թիմային ինտելեկտուալ խաղի մասնաճյուղի առաջնություն: 4 ֆակուլտետներում խաղին մասնակցեցին 22 թիմեր: Ֆակուլտետների հաղթողները մրցեցին եզրափակիչում, որտեղ հաղթող թիմը խաղի պատմության մեջ առաջին անգամ ստացավ փոխանցիկ գավաթ: (02.03 - 12.03.2013 թ.),
4. Ինտելեկտուալ խաղ դպրոցականների համար: ԵՊՀ ԻՄ Մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման բաժնի հետ համատեղ: Մասնակցեցին Տավուշի մարզի 11 դպրոցների 12-րդ դասարանի աշակերտները: 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցնող թիմերը ստացան պատվոգրեր և մրցանակներ, իսկ մյուս թիմերը՝ շնորհակալագրեր: Եվս մեկ մրցանակ տրվեց մրցանակային հարցին պատասխանած միակ թիմին: (26.04.2013 թ.):

Այլ տիպի միջոցառումներ՝

1. «Կենսափորձ» հարցազրույցների ծրագրի առաջին հանդիպումը: Հյուրը ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Առաքելյանն էր: Ծրագրի նպատակն է ուսանողներին ներկայացնել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների անցած ուղին, ինչը խթան կհանդիսանա նրանց գիտական և հասարակական ակտիվության համար: Բացի նախապես պատրաստված հարցերից, իրենց հարցերն ուղղեցին նաև ներկա ուսանողները: (08.10.2012թ.),
2. «Բանակցություն» խորագրով դերային խաղ: Մասնակցեցին 20 ուսանողներ Բնական գիտությունների և Տնտեսագիտության ֆակուլտետներից: (06.11.2012թ.),
3. Սեմինար «Ճանապարհային երթևեկության կանոններ» թեմայով: Սեմինարի ընթացքում նախ ուսանողներին ներկայացվեցին ճանապարհային

երթնեկության հիմնական և կարևոր կանոնները, ճանապարհային նշաններն և նշագծումները, ապա քննարկվեցին վարորդական իրավունքի տեսական քննության հարցաշարում տեղ գտած մոտ 50 հարցեր: (26.11.2012թ.),

4. Գրքահավաք Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համար: ԵՊՀ ԻՄ ուսանողները, ինչպես նաև դասախոսները և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ (ԵՊՀ ՈԻԳԸ, ԵՊՀ գրադարան, ԵՊՀ ԻՄ գրադարան, Եվրասիա համագործակցության հիմնադրամ, Իջևանի «Գալիք» կրթարան) նվիրաբերեցին մոտ 500 գրքեր, գրքուկներ, ամսագրեր, որոնք բաժանվեցին Աղավնավանք, Խաչարձան, Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեվան գյուղերի դպրոցների գրադարաններին: (08.01 - 19.04. 2013 թ.),
5. Դասախոսություններ դպրոցներում: Գրքերը դպրոցներին նվիրաբերելու ժամանակ Տավուշի մարզի Աղավնավանք, Խաչարձան, Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեվան գյուղերի դպրոցներում ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ 4 անդամներ կարդացին գիտահանրամատչելի զեկուցումներ: (18.04 – 19.04.2013 թ.),
6. Մաթեմատիկայի օլիմպիադա: Մասնակցեցին բնական գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետի 8 ուսանողներ: (06.05.2013 թ.),
7. Կիրառական արվեստի ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ Շուշան Բաղդասարյանի անհատական ցուցահանդեսը Իջևանի պատկերասրահում: Ներկայացված էր շուրջ 100 աշխատանք: (13.05-31.05.2013 թ.):

Վերոյալներից բացի ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ անդամները մասնակցել են ԵՊՀ-ում կազմակերպված միջազգային, միջբուհական և ՎՊՄԻ-ում կազմակերպված հանրապետական գիտաժողովների, ԵՊՀ-ում կազմակերպված կոնֆերանսի, եղել են Իջևանի պատմության թանգարանում և Նորավանքում, կատարել են ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայք-էջի մասին իրազեկման աշխատանքներ մասնաճյուղի ներքում, մասնակցել են «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան»-ի և «Զինիշյան» հիշատակի հիմնադրամի հովանավորած դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը, բանավեճի հանրապետական մրցաշարի, հեռուստաբանավեճերի:

ՈԻԳԸ 4 անդամների ստեղծագործություններ հրատարակվել են ԵՊՀ «Գրական համալսարան. ստեղծագործում են ուսանողները» ժողովածուում:

ՈԻԳԸ անդամները մասնաճյուղի գրադարանին նվիրաբերել են մոտ 200 գիրք՝ Գրքահավաքի արդյունքում հավաքված և «Գրքի բանկ» կազմակերպության տրամադրած գրքերից, Օտար լեզուների ամբիոնին՝ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ անգլերեն քարտեզներ, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնին՝ ՀՀ պատմամշակութային կոթողների քարտեզ, Կրթության որակի ապահովման և գնահատման բաժնին՝ թվային տեսախցիկի 8 ԳԲ հիշողությամբ կրիչ:

Ծավալած գործունեության համար ԵՊՀ ՈԻԳԸ-ի կիսամյակային ընդլայնված նիստերի ժամանակ ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ-ն արժանացել է «գերազանց վերապահումով» և

«գերազանց» գնահատականների և ստացել պատվոգրեր: Պարգևատրվել են մասնաճյուղի ՈՒԳԸ-ի ակտիվ անդամներ:

2013 թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ ընդլայնված նիստ: Մասնաճյուղի ՈՒԳԸ-ի նախագահ Սլավիկ Ալավերդյանը ներկայացվեց կառույցի ստեղծման պատմությունը և նպատակները, ապա տեսանյութի միջոցով ներկայացվեց հիմնադրումից ի վեր կառույցի ողջ գործունեությունը: Պատվոգրեր ստացան վերջին 3-4 տարիների ընթացքում կառույցի աշխատանքներին առավել ակտիվորեն մասնակցած ուսանողները: Շնորհակալագրեր և գրքեր ստացան ՈՒԳԸ-ին աջակցած և նրա հետ համագործակցած իս անձինք, կառույցները և դրանց ղեկավարները: Շնորհակալագիր տրվեց մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանին՝ կազմավորումից ի վեր կառույցին ցուցաբերած համակողմանի աջակցության համար:

Նիստի վերջում ելույթ ունեցավ երիտասարդ երգիչ Վահագն Ռուշանյանը (Վահագ Ռաշ), ով ներկաների համար կատարեց 4 երգ:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Սլավիկ Ալավերդյանի՝ մասնաճյուղն ավարտելու կապակցությամբ ՈՒԳԸ նախագահի պարտականությունները ժամանակավորապես ստանձնեց ՈՒԳԸ փոխնախագահ Արա Հովսեփյանը: